

# ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի ղեկավարի հաշվետու ժողովի

Սարուխան

14.02.2012թ..

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2011թ.-ի ընթացքում կատարված աշխատանքների մասին

զեկ. Վ. Գևորգյան

Անցկացման վայրը-Սարուխանի գյուղապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճ

Մասնակիցներ- Գեղարքունիքի փեխմարզպետ Արոտւշ Ղուկասյան, համայնքի ավագուն անդամներ, համայնքի բնակիչներ, համայնքում գործող կազմակերպությունների տնօրեններ:

Մասնակիցների քանակը-մոտ 100մարդ

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ համայնքի 2011թ. բյուջեն կազմել 153 մլն դրամ, որից համայնքում կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

Մշակույթի տան հիմնանորոգման համար համայնքի բյուջեից ծախսվել է 10 միլիոն դրամ եւ ՀՀ պետական բյուջեի միջոցներից 38 միլիոն 600 հազար դրամ:

ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի եւ համայնքի բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել է Սարուխանի թիվ 1 մանկապարտեզի տանիքը, ձեռք են բերվել մանկական գույք եւ դիդակտիկ նյութեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 9 միլիոն 600 հազար դրամ, որից գյուղապետարանը ներդրել է 3 միլիոն դրամ: Վերանորոգվել է նաեւ թիվ 1 մանկապարտեզի երկու դասասենյակ: Վերջինիս ընդհանուր արժեքը կազմել է 3 միլիոն 300 հազար դրամ: Համայնքի մանկապարտեզներն աշխատում են շուրջտարյա, որի համար համայնքի բյուջեից տարեկան ծախսվում է 24 միլիոն դրամ, իսկ արվեստի դպրոցի տարեկան ֆինանսավորումը կազմում է 14 միլիոն 881 հազար դրամ: Մանկապարտեզների եւ գյուղապետարանի համար ձեռք է բերվել 993 հազար 500 դրամի համակարգչային տեխնիկա: Իսկ գյուղի մարզասեր պատանիների համար գնվել է 497 հազար 800 դրամ արժողությամբ սպորտային համազգեստ:

Սարուխանի համայնքապետարանը շարունակում է կիսել ուսանող ունեցող ծնողների հոգսի մի կարեւոր մասը` ապահովելով նրանց ամենօրյա անվճար եւրթեւեկությունը դեպի մարզկենտրոնի ուսումնական հաստատություններ:

Ուսանողների անվճար փոխադրման համար տեղական միջոցներից ներդրվել է 3 միլիոն 100 հազար դրամ:

Սարուխանի գլխավոր մայրուղին համալրվել է եւս երկու կանգառասարահներով, որի համար ծախսվել է 679 հազար 800 դրամ:

Համայնքում կանոնոնավոր կերպով կազմակերպվում է աղբահեռացումը, որի համար համայնքի բյուջեից տարեկան ծախսվում է շուրջ 8 միլիոն դրամ:

Տարվա ընթացում ձեռք է բերվել 33 աղբաման եւ ծախսվել է 1 միլիոն 485 հազար դրամ:

Վերակառուցվել է Վազգեն Սարգսյան եւ Մարտիրոս Սարյան փողոցների փողոցային լուսավորության ցանցը, որի արժեքը կազմում է 3 միլիոն 500 հազար դրամ:

Միաժամանակ համայնքի բյուջեով նախատեսվել էր խմելու ինքնահոս ջրագծի կառուցման համար 20 միլիոն դրամի ներդրում, որը սակայն ծրագրի չիրականացման համար չծախսվեց եւ տեղափոխվեց 2012 թվականի բյուջե:

Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրվել է 2 միլիոն 300 հազար դրամ ֆինանսական օգնություն:

2012 թվականին նախատեսվում է կառուցել փողոցային լուսավորության նոր ցանց , խմելու ինքնահոս ջրագիծ, իրականացնել համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների ասֆալտապատում:

Համայնքի ղեկավար՝

Վ. Գևորգյան